40-ՐԴ ՆԻՍՏ

27 նոյեմբերի 1918թ.

Նախագահում է *Ա. Սահակյան.* մինիստրական օթյակում են՝ Մինիստրնախագահ, արտաքին գործոց, լուսավորության, պարենավորման, իրավարարության և ֆինանսական մինիստրներ:

Նախագահը կարդում է օրակարգը. քննության է առնվում միայն օրակարգի առաջին կետը՝ օրինագիծ դատաստանական հիմնարկությունների և մի քանի դատաստանական օրենքների փոփոխման մասին - Ա. ընթերցում:

Զեկուցանող *Մալխասյանը* նկարագրում է այն վիճակը, որ ունի դատաստանական գործն առհասարակ մեզնում, բացատրում է անոր մալության պատճառները գլխավորապես նրանով, որ մենք կտրված ենք եղել կենտրոնից և, հետևապես, զրկված դատական այն բարձր հիմնարկություններից, որոնք գոյություն ունեին մեր կյանքում:

Հրապարակի վրա դրված կա երկու խնդիր՝ առաջարկված իրավարարության մինիստրի կողմից. մեկը՝ որոշ բարեփոխությունների ենթարկելով՝ ընդունել դատարանական մինչև այժմ գոյություն ունեցող սիստեմը և երկրորդ՝ մտցնել երդվյալների դատարանը:

Օրինագծի հիմնական խնդիրների դեմ առարկություն չլինելով՝ խորհրդարանն անցնում է առանձին կետերի քննությանը:

Առաջին մասի այն կետը, որ վերաբերում է դատական բարձր պաշտոնյաների նշանակելուն, առիթ է տալիս մեծ վիճաբանության, որին մասնակցում են մի կողմից՝ Ա. Խոնդկարյան, Դ. Զուբյան, Մամիկոնյան, Ա. Տիգրանյան, մյուս կողմից՝ իրավարարության մինիստր Ս. Հարությունյան: Առաջինները պնդում են, որ պիտի այդ պաշտոնյաները նշանակվեն խորհրդարանի կողմից և հիմնավորում են իրենց ասածը: Վերջինն, ընդհակառակը, դեմ լինելով այդ կարծիքին, առաջարկում է թողնել պաշտոնյաների նշանակումը Մինիստրների խորհրդին:

Քննարկվում է առաջինների կարծիքը [և] ընդունվում է խորհրդարանի կողմից ձայների բացարձակ մեծամասնությամբ:

Տասնհինգ րոպե ընդմիջումից հետո քննության է առնվում օրինագծի բ. մասը՝ երդվյալ ընթերականների խնդիրը: Վեճ է առաջ գալիս այն մասին, թե կանայք կարո՞ղ են լինել որպես ընթերականներ, թե՞ ոչ: Թեր խոսում են՝ Դ. Զուբյան, Խոնդկարյան, Մ. Հարությունյան, Ղարաբեկյան և բժ. Գրո, դեմ՝ Մամիկոնյան, Զաքարյան, Ս. Խաչատրյան, Բուդաղյան, Մալխասյան և իրավարարության մինիստր:

Քվեարկվում և կանանց մասնակցությունը չի ընդունվում:

Նիստը փակվեց գիշ[երվա] ժ. 12-ին:

«Զանգ», 25 դեկտեմբերի 1918թ.